Հաճախ տրվող հարցեր (ՀՏՀ) ծնողների

Մտահոգություններ կարմրուկի պատվաստման վերաբերյալ

Կարմրուկը պատվաստմամբ կանխվող հիվանդություն է: Դա նշանակում է, որ պատվաստումը կարող է կանխել վարակվելը և վարակը տարածելը: Ապագայում պատվաստմամբ կանխվող հիվանդության բռնկումներից (սովորականից ավել դեպքեր) պաշտպանվելու լավագույն միջոցը պատվաստումների թվի բարձր մակարդակի պահպանումն է Լոս Անջելեսի վարչաշրջանում:

1. Արդյո՞ք պատվաստանյութերն անվտանգ են
Այո: Պատվաստանյութերի մեծ մասն ունի մեղմ կողմակի բարդություններ, ինչպիսիք են բարձր ջերմությունը կամ ցավը պատվաստման կետում: Ավելի սուր կողմնակի բարդությունները շատ հազվադեպ են: Դուք շատ ավելի հավանական է կունենաք լուրջ առողջական խնդիրներ հիվանդության, քան պատվաստանյութի պատճառով:

2. Արդյո՞ք պատվաստանյութերն առաջացնում են աուտիզմ
Ոչ, չկա ապացույց, որ կարմրուկի-կարմրախտի-խոզուկի (ԿԿԽ) կամ այլ պատվաստանյութերն առաջացնում են աուտիզմ: 1998 թ-ին, բժիշկ Էնդրյու Վակեֆիլդը հետազոտական աշխատություն է տեղադրել «Lancet» բժշկական պարբերականում: Այս աշխատությունում բժիշկ Վակեֆիլդը պնդում էր, որ պատվաստանյութերի և աուտիզմի միջև կապ կա: 2010 թ. «Lancet»- ը դրա հավաստի ապացույց չի գտել: Փոխարենը նրանք գտել էին, որ բժիշկ Վակեֆիլդին վճարել են ավելի քան 665000 ԱՄՆ դոլար փաստաբանները, ովքեր ցանկանում էին ցույց տալ, որ ԿԿԽ պատվաստանյութը վտանգավոր էր:

Նաև ապացուցված չէ, որ տիմերոսալը (կոնսերվանտ որոշ պատվաստանյութերում) հարուցում է աուտիզմ: Սակայն ծնողների մտահոգությունները փարատելու համար, տիմերոսալը հանվել է կամ նվազեցվել բոլոր մանկական պատվաստանյութերում, բացառությամբ 2001 թ. գրիպի պատվաստանյութի մեկ տեսակի: Ոչ բոլոր գրիպի պատվաստանյութերի բաղադրության մեջ կա տիմերոսալ:

3. Արդյո՞ք պատվաստումներն արդյունավետ են
Այո, բազմաթիվ հիվանդություններ վերացել են ԱՄՆ-ում, քանի որ պատվաստանյութերն արդյունավետ են: Օրինակ՝ 1977 թ. ծաղիկ հիվանդությունն ամբողջությամբ վերացավ ամբողջ աշխարհում: 1979 թվականից ԱՄՆ-ում պոլիոմիելիտի դեպքեր չեն գրանցվել: 2000 թվականին ԱՄՆ-ում կարմրուկի դեպքեր չեն եղել: Սակայն, ինչպես վերջերս տեսանք, պատվաստումներով կանխարգելվող հիվանդությունները հեշտությամբ կարող են տարածվել, երբ չպատվաստված ճանապարհորդները վիրուսն ԱՄՆ են բերում այլ երկրներից:

Չնչին հնարավորություն կա, որ պատվաստված անձինք կարող են վարակվել հիվանդության բռնկման ժամանակ, քանի որ ոչ մի պատվաստանյութ 100% արդյունավետ չէ: Սակայն, մենք ավելի շատ հիվանդությունների դեպքեր կունենանք, առանց պատվաստումների բարձր թվի:

Կարևոր կետեր.

- Պատվաստումը շատ հիվանդությունների, ինչպիսին է կարմրուկը, վարակման և տարածման կանխարգելման լավագույն միջոցն է:
- Պատվաստումն ապահով և արդյունավետ է:
- Պատվաստումը պաշտպանում է Ձեզ և Ձեր համայնքը լուրջ հիվանդություններից:
- Ապագայում հիվանդության բռնկումներից պաշտպանվելու լավագույն միջոցը պատվաստումների թվի բարձր մակարդակի պահպանումն է Լոս Անջելեսի վարչաշրջանում:

Ավելի մանրամասն՝

Լոս Անջելես վարչաշրջան, Առողջապահության վարչություն
http://publichealth.lacounty.gov/media/measles/index.htm

Կալիֆորնիայի Առողջապահության վարչություն
https://www.cdph.ca.gov/Programs/CID/DCDC/Pages/Immunization/measles.aspx

Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն
http://www.cdc.gov/vaccines/

Armenian
CDCP-IP-0017-04 (4/22/2019)

4. Ինչպե՞ս են պատվաստումներն օգնում կանխարգելել հիվանդությունները անհատների մոտ և համայնքներում
Մեր պատվաստումներն օգնում են զերծ մնալ և չտարածել հիվանդությունը, որը կարող ենք կանխարգելել: Նաև պատվաստումն օգնում է պաշտպանել այլ մարդկանց, որոնք չեն կարող պատվաստվել առողջական պատճառներով: Չպատվաստված անձինք հիվանդանալու ավելի մեծ ռիսկի են ենթարկվում, օրինակ՝ պատվաստման տարիքի չհասած երեխաները, թույլ իմունային համակարգ ունեցող մարդիկ և պատվաստանյութի նկատմամբ սուր ալերգիա ունեցող մարդիկ: Երբ չպատվաստված մարդկանց թիվն ավելի մեծ է, համայնքի պաշտպանության մակարդակն իջնում է, և հիվանդության բռնկման ռիսկերը մեծանում:

5. Ի՞նչ է անում Առողջապահության վարչությունը՝ պատվաստումները խրախուսելու համար

Լոս Անջելեսի Առողջապահական վարչությունն աշխատում է խրախուսել պատվաստումները հետևյալ կերպ.

- Օգնելով հասարակությանն ընդունել տեղեկացված որոշումներ պատվաստումների վերաբերյալ այնպիսի քարոզարշավների միջոցով, ինչպիսին է Preteen պատվաստումների շաբաթը, որը նշվում է փետրվար ամսին
- Տրամադրելով նյութեր, վերապատրաստումներ անցկացնելով և խորհրդատվություն տրամադրելով պատվաստման ծառայություններ տրամադրողներին՝ համոզվելու, որ պատվաստումներն անվտանգ են, արդյունավետ և տրվում են հիվանդներին ճիշտ ժամանակին
- Օգնելով դպրոցներին և մանկական կենտրոններին հետևել դպրոցական պատվաստման օրենքներին՝ աշակերտներին և ծնողներին կրթելով այդ օրենքների մասին
- Պատվաստմամբ կանխարգելվող հիվանդությունների թվի դիտարկումը և հաշվետվությունը՝ դեպքերին արագ արձագանքելու և կանգնեցնել դրանց տարածումը:

6. Որտե՞ղ կարելի է պատվաստվել

Զանգահարեք ձեր բժշկին՝ ԿԿԽ պատվաստում ստանալու համար, որը կարող է հատուցվել ձեր ապահովագրությամբ: Կարող եք նաև պատվաստվել դեղատանը կամ հիվանդանոցում, որոնք առաջարկում են անվճար կամ էժան պատվաստումներ: Զանգահարեք 2-1-1 կամ այցելեք՝ www.publichealth.lacounty.gov/ip մոտակա հիվանդանոցը գտնելու համար:

Ցանկանո՞ւմ եք ավելին իմանալ պատվաստումների մասին

Լոս Անջելեսի վարչաշրջան, Առողջապահության վարչություն, Պատվաստումների ծրագիր
http://publichealth.lacounty.gov/ip/index.htm

Պատվաստման մակարդակը Կալիֆորնիայի դպրոցներում և ցերեկային հաստատություններում Կալիֆորնիայի Առողջապահության վարչություն
http://www.shotsforschool.org/

Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնների կողմից խորհուրդ տրվող պատվաստումներն ըստ տարիքի
https://www.cdc.gov/vaccines/vpd/vaccines-age.html

Armenian
CDCP-IP-0017-04 (04/22/19)